ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 60

«23» 09 2021 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով և 50-րդ հոդվածի 22-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 26-ի՝ «Դատախազների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանելու, հարցաշարը հաստատելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի օգոստոսի 1-ի N 54 և 2017 թվականի սեպտեմբերի 25-ի N 87 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44 հրամանի հավելված N 2-ով սահմանված «Դատախազների ատեստավորում անցկացնելու» հարցաշարում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) 174-րդ կետում «Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմքերը և պայմանները» բառերը փոխարինել «Համաձայնեցման վարույթի կիրառման հիմքը և կարգը» բառերով,

2) լրացնել 174.1 և 174.2 կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«174.1) Համագործակցության վարույթի կիրառման հիմքը և կարգը.

174.2) Մեղադրյալի բացակայությամբ վարույթի (հեռական վարույթ) իրականացման հիմքը, պայմանները և կարգը.»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Պաշտոնակատար,
Արդարադատության երրորդ դասի
պետական խորհրդական՝ **Հ. Ասլանյան**